ԵՆԹԱԿԱՅԻ ԵՎ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ՀԵՆՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նախադասությունն իբրև շարահյուսական կառույց ձևավորվում է ենթակա+ստորոգյալ կապակցության հիմքի վրա, որը նախադասության միջուկային կառույցն է և՛ կառուցվածքային, և՛ հաղորդակցային-իմաստային առումով։ Այս տեսակետից ամենևին էլ պատահական չէ, որ ռուսերենի ակադեմիական քերականության (1970 թ.) հեղինակները նախադասության կառուցվածքային կաղապարները բանաձևելիս հիմնվում են ենթակայի և ստորոգյալի կապակցության վրա։ Ենթակայի և ստորոգյալի հարաբերության քննությունը շարահյուսության կենտրոնական, հանգուցային ու բարդ խնդիրներից մեկն է։ Իհարկե, չենք կարող ասել, թե այս շատ կարևոր հարցը լեզվաբանների ուշադրությանը չի արժանացել։ Ընդհակառակը, այն քննվել է հնագույն շրջաններից սկսած։ Նպատակ չունենալով հանգամանորեն խոսելու լեզվաբանական տարբեր ուղղությունների ու տարբեր լեզվաբանների տեսակետների մասին, կաշխատենք խմբավորել դրանք ըստ ընդհանրությունների, այնուհետև շարադրել մեր նկատառումները, հայտնել մեր կարծիքը։

Հարցի վերաբերյալ եղած կարծիքները կարելի է խմբավորել երեք ընդհանուր կետով։

1. Ենթական և ստորոգյալը նախադասության հավասարազոր անդամներ են և կապվում են փոխադարձ ստորադասությամբ։

2. Գլխավորը, կարևորը ենթական է, քանի որ ստորոգյալը ենթակային վերագրվող հատկանիշ է և դրանով իսկ որոշ իմաստով նրանից կախյալ։

3. Նախադասության կառուցվածքային կենտրոնը, հետևաբար և գլխավորը ստորոգյալն է, ենթական նրա քերականական լրացումն է, նրանից կախյալ։

Ըստ էության գործ ունենք միմյանց բացառող երեք տեսակետների հետ, որոնք շարահյուսական վերլուծության հարցում տարբեր մոտեցումների արտահայտություններ են։ Նախապես ասենք, որ մենք երրորդ տեսակետի կողմնակից ենք, հետևաբար մեր առարկությունները վերաբերում են առաջին երկուսին միաժամանակ, որոնք միշտ չէ, որ միմյանցից որոշակիորեն սահմանազատված են արտահայտվում։ Նախքան մեր փաստարկները շարադրելը և ժամանակակից հայերենի տվյալներով երրորդ տեսակետը հիմնավորելը համառոտակի անդրադառնանք առհասարակ շարահյուսական կապակցությանը վերաբերող որոշ հարցերի, որոնք ընկած են մեր վերլուծությունների հիմքում։

Պետք է հստակորեն տարբերակել շարահյուսական հարաբերության տեսակ և կապակցության եղանակ հասկացությունները, որոնք բնորոշ են շարահյուսական կառույցներին։

Հարաբերության տեսակ ասելով նկատի ունենք շարահյուսորեն կապված շարահյուսական նվազագույն միավորների՝ միմյանց նկատմամբ ունեցած

հարաբերությունը, որ կարող է լինել հավասարների, համադաս միավորների կապակցություն և ոչ հավասարների, ոչ համադաս միավորների կապակցություն։ Առաջին դեպքում գործ ունենք բազմակի անդամների հետ՝ կարմիր և կապույտ (մատիտներ), հաց և խնձոր (ուտել), ես և Արամը (գնացինք) և այդ կապակցությունը կոչում ենք համադասական։ Երկրորդ դեպքում կապակցվում են ոչ հավասարազոր միավորներ (կարմիր մատիտ, ես գնացի, ուտել հաց)։ Այս դեպքում կապակցվող միավորների միջև կան երկու տեսակի հարաբերություններ՝ ստորադասական և ստորոգումային։ Ուրեմն շարահյուսական կառույցի բաղադրիչները միմյանց նկատմամբ երեք տեսակի հարաբերության մեջ են՝ համադասական, ստորադասական և ստորոգումային[1]։

Կապակցության եղանակ ասելով նկատի ունենք շարահյուսական այն միջոցները, որոնցով կապակցվում են շարահյուսական կառույցի միավորները՝ հիմնվելով ստորադաս միավորի քերականական ձևի վրա։ Ժամանակակից հայերենում կապակցության եղանակները երեքն են՝ կառավարում, համաձայնություն, առդրություն։ Ենթակայի և ստորոգյալի կապակցության էությունը բացահայտելու համար նկատի պիտի ունենանք և՛ հարաբերության տեսակը, և՛ կապակցության եղանակը։ Իհարկե, այս հարցերը քննված են քերականագիտության մեջ, բայց ո՛չ հստակ տարբերակումով և ենթակայի ու ստորոգյալի հարաբերության մեջ ո՛չ միասնական, ո՛չ երկուսի միաժամանակյա հաշվառումով։ Միայն նշվում է, որ ենթական ու ստորոգյալը կապվում են համաձայնությամբ։ Մասամբ այստեղից են գալիս ավանդական քերականության՝ այս հարցում նկատվող թերություններն ու առկա հակասությունները։ Եթե սրան ավելացնենք նաև այն, որ ավանդական քերականությունը հաճախ հակված է եղել իր վերլուծությունների հիմքում դնելու տրամաբանական դատողությունների կաղապարները՝ հաճախ անտեսելով լեզվական կառույցի յուրահատկությունները, ապա ասելիքն ավելի պարզ կդառնա։ Հարցին այդպես մոտենալու դեպքում, իրոք, ենթական դառնում է տրամաբանորեն գլխավորը, քանի որ նա է ստորոգյալով արտահայտված գործողության կատարողը, հատկանիշի տերը (հիշենք ենթակայի ավանդական, դասագրքային սահմանումը), իսկ ստորոգյալը քանի որ ենթակային վերագրվող հատկանիշ է, գործողություն, հետևաբար տրամաբանորեն կախված է նրանից, դեմքով ու թվով համաձայնում է ենթակային։ Փաստորեն այս տրամաբանությամբ հարցի քննությունը առաջացնում է տրամաբանական հակասություն։ Նկատի ունենք նաև այն մոտեցումը, ըստ որի ենթական և ստորոգյալը հավասարաչափ նախադասության գլխավոր անդամներ են։ Դիմենք «Ժամանակակից հայոց լեզու» աշխատության մեջ եղած կարծիքին. «Ենթական նախադասության գլխավոր անդամներից մեկն է, այն հավասարական հարաբերության մեջ է գտնվում ստորոգյալի նկատմամբ, այսինքն չի լրացնում վերջինիս, կախյալ կամ լրացական հարաբերության մեջ չի գտնվում նրա նկատմամբ»[2]։ Այնուհետև, «Բառերի այն կապակցությունը, որի դեպքում ստորադաս անդամը այս կամ այն ձևն է ստանում գերադաս անդամի

---

1 Բացի այս երեք տեսակի հարաբերություններից կան նաև համաստորադասություն ու ենթաստորադասություն. համադասությունն ու ստորադասությունը անխառն հանդես չեն գալիս։

2 Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնասյան; Հ. Ա. Օհանյան, Խ. Գ. Բադիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Երևան, 1976, էջ 139։

իմաստային կամ բերականական կարգերի թելադրությամբ կամ էլ փոփոխություն չի կրում նրա պահանջով, կոչվում է կապակցություն»։ «Կապակցությունը դրսևորվում է համաձայնությամբ, խնդրառությամբ և առդրությամբ»։ «Թեև ենթական և ստորոգյալը իրար նկատմամբ հավասարական հարաբերության մեջ են գտնվում և նրանցից որևէ մեկը գերադաս չէ մյուսի համեմատությամբ, սակայն ստորոգյալը բերականական որոշակի փոփոխություն է կրում, երբ փոփոխվում է ենթակայի դեմքը կամ թիվը»[3] (ընդգծումները մերն են—Հ. Հ.)։ Այստեղ որոշակիորեն արտահայտվում է այն հակասությունը, որ առկա է որոշ հայ քերականների աշխատություններում, ովքեր այս կամ այն առիթով խոսել են ենթակայի և ստորոգյալի կապակցության մասին։ Ո՞րն է այդ հակասությունը։ Ասվում է, որ համաձայնությունը կապակցության դրսևորման ձև է, որտեղ «ստորադաս անդամը այս կամ այն ձևն է ստանում գերադաս անդամի... թելադրությամբ», ենթական և ստորոգյալը համաձայնում են դեմքով ու թվով. ընդ որում, ստորոգյալն է համաձայնում ենթակային, և մյուս կողմից նրանց հարաբերությունը դիտվում է իբրև հավասարների հարաբերություն։

Իրոք, համաձայնությունը ստորադասական կապակցության եղանակ է, և ստորադասության դեպքում գործ ունենք ոչ հավասարազոր բաղադրիչների հետ։ Ենթական և ստորոգյալը կապվում են համաձայնությամբ, հետևաբար նրանք հավասազոր գլխավոր անդամներ լինել չեն կարող։

Ինչպես ասացինք, կա նաև այն տեսակետը, ըստ որի ենթակայի և ստորոգյալի կապակցություն մեջ, հետևաբար և ամբողջ նախադասության կառուցվածքում ավելի կարևորը, ավելի գլխավորը ստորոգյալն է։ Այս տեսակետը համեմատաբար նոր է այն իմաստով, որ մեր օրերում ավելի շատ կողմնակիցներ ունի։ Դեռևս X դարում Հովհ. Քռնեցին գրում էր. «աստ գիտելի է, զի ամենայն անձնական բայ խնդրէ զուղղականն յառաջկույսն»[4]։ XVIII դ. վերջերին Մ. Չամչյանը գրում էր. «Եթէ բայն իդէ դիմաւոր, անուն պարտի դնիլ յուղղական հոլովն»[5]։ Ավելի ուշ Գ. Ավետիքյանը նշում է. «Դիմաւոր բայն պահանջէ զտէր՝ յուղղական հոլովն»[6]։ Եթե իմի բերենք այս կարծիքները, պիտի ասենք, որ դրանց հեղինակները, թեև ենթական որոշակիորեն չեն համարում ստորոգյալի լրացում (դիմավոր բայի), այնուամենայնիվ գրում են, որ ստորոգյալը պահանջում է ուղղականով արտահայտված ենթակա։ Իսկ եթե պահանջում է, ուրեմն պահանջողը գերադաս է, պահանջվողը ստորադաս։ Այս տեսակետի հետևողական պաշտպանը մեր իրականության մեջ Մ. Աբեղյանն էր։ Ահա ինչ է գրում նա. «Խոսքն (=նախադասություն—Հ. Հ.) ուրեմն իր ամենապարզ ձևով կազմվում է մի բայից», «առանց բայի խոսք չկա, որովհետև մյուս տեսակի բառերը ստորոգում չեն ցույց տալիս...», «ամեն բայ, ընդհակառակն, մենակ կազմում է մի խոսք, որովհետև ցույց է տալիս թե՛ ստորոգում և թե՛ խոսքի համար անհրաժեշտ՝ ենթակայի և ստորոգյալի (առարկայի և հատկանիշի) գաղափարները», «Ենթակա ասվում են, ուրեմն, այն լրացումները, որոնք բացահայտում են բայի դեմքը, որոշ կեր-

3 Սույն տեղում, էջ 298։
4 Յովհ. Քռնեցի, Յաղագս քերականին, Երևան, 1977, էջ 200։
5 Մ. Չամչեան, Քերականութիւն Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1779, էջ 404։
6 Գ. Ավետիքեան, Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815, էջ 463։

պով ցույց տալով անող կամ եղող առարկան, որին վերաբերվում է բայիմաստը կամ մի հատկանիշ»[7]։

Մեզ հետաքրքրող հարցին անդրադարձել է նաև Գ. Ջահուկյանը «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» աշխատության մեջ, որը իր հարցադրումներով, վերլուծության մեթոդներով, դիպուկ ու նուրբ դիտողություններով, եզրակացություններով երևույթ է հայ լեզվաբանության մեջ։ Նա տարբերում է ենթակայի երեք կարգի ըմբռնում՝ իրական ենթակա, հոգեբանական ենթակա և լեզվաքերականական ենթակա և ըստ այդ երեք ըմբռնումների քննում է ենթակայի ու ստորոգյալի հարաբերությունը, տարբերակելով նաև ձևական և ոչ ձևական ենթականեր։ Ջանտեսելով տարբեր տեսանկյուններից ենթակայի և ստորոգյալի կապակցության վերլուծության կարևորությունն առանձին դեպքերում, այնուամենայնիվ, կարծում ենք, որ լեզվաբանության և առհասարակ քերականական աշխատությունների առաջնահերթ խնդիրն է լեզվաքերականական ենթակայի և նրա ու ստորոգյալի հարաբերության բացահայտումը։ Նախադասության անդամների հարաբերությունը քննելիս Գ. Ջահուկյանը տարբերում է երկու «մակարդակ»՝ հաղորդային և հաղորդակցային. «...առաջին դեպքում բայ-ստորոգյալը հանդես է գալիս որպես առարկաների հարաբերության դրսևորում..., ուստի և դառնում է յուրատեսակ կենտրոն», «...երկրորդ դեպքում որպես նախադասության կենտրոն հանդես է գալիս այսպես կոչված ենթական, մտքի այն առարկան, որը խոսողի ուշադրության կենտրոնում է»։ Այնուհետև՝ «...ենթական հաղորդակցային առումով կենտրոնական անդամ է, հաղորդային առումով՝ դիմավոր բայով արտահայտված հարաբերության կողմերից մեկը, այսինքն՝ բայական արժույթի մի դրսևորումը, հետևաբար դիմավոր բայի համեմատությամբ լրացական անդամ»[8]։ Կրկնում ենք, լեզվաբանության համար առաջնայինը լեզվաքերականական հարաբերությունն է։ Նկատենք, որ հաղորդակցային, տրամաբանական-հոգեբանական իմաստով նույնիսկ լրացումը կարող է դառնալ գլխավորը, հիմնականը՝ կրելով տրամաբանական շեշտ։ Գ. Ջահուկյանի մեկնաբանության մեջ ուշադրության արժանի է գիտության համար ոչ պակաս կարևոր մի հանգամանք. նա իրավացիորեն այս կամ այն տեսակետը չի համարում ճիշտ կամ սխալ, այլ որոշակիորեն նշում է, որ վերլուծության տարբեր ելակետերից գլխավոր կարելի է համարել և՛ ենթական, և՛ ստորոգյալը։ Բայց, կրկնում ենք, ենթական և ստորոգյալը լեզվի մեջ առաջին հերթին պիտի գնահատել իբրև շարահյուսական կառույցի, նախադասության կառուցվածքային տարրեր, և նրանց հարաբերությունն առաջին հերթին պետք է գնահատվի հենց այդ ելակետից։

Ենթակայի ու ստորոգյալի կապակցության մեջ և առհասարակ նախադասության կառուցվածքում ստորոգյալը ամենակարևոր անդամն են համարում նաև այլ լեզվաբաններ։ Է. Բենվենիստը, օրինակ նախադասության բոլոր հատկանիշները ստորոգման համեմատությամբ համարելով երկրորդական, գրում է. «...պարտադիր չէ «սուբյեկտի» (ենթակայի) առկայությունը

---

7 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 362, 370։ Բայ ասելով Մ. Աբեղյանը նկատի ուներ միայն դիմավոր բայերը, և ստորոգյալի նրա ըմբռնումը չի նույնանում ավանդական ըմբռնմանը։

8 Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 333, 334, 388։

պրեդիկատի կողքին։ Նախադասության ստորոգող անդամն ինքնին բավական է, քանի որ նա որոշում է սուբյեկտը»[9]։ Ե. Կուրիլովիչը նշում է. «...բնորոշել ամբողջ նախադասությունը, նշանակում է բնորոշել նախադասության ստորոգյալը»[10]։ Իսկ Լ. Թենիերը գրում է. «Կառուցվածքային և ոչ իմաստային տեսակետից ենթական այնպիսի լրացում է, ինչպես մյուսները»[11]։ Հիշատակենք նաև Վ. Յուրչենկոյի կարծիքը ստորոգյալի շատ կարևոր դերի մասին։ Նա նշում է երեք հիմնական դեր. ա) կարգային, որ ցույց է տալիս ստորոգվող հատկանիշը, բ) հարաբերային, որ ծառայում է իբրև կապող և անմիջական օղակ ենթակայի ու բայական լրացումների միջև, գ) եղանակավորող, որ արտահայտում է եղանակի և ժամանակի կարգեր[12]։ Հարկ չկա վկայակոչելու այլ լեզվաբանների[13], մանավանդ որ միշտ չէ, որ լեզուներում նախադասության կառուցվածքը, բառերի կապակցության եղանակները և նրանց միջև եղած հարաբերությունները նույնն են։

Այժմ բերենք այն փաստարկները, որոնց վրա հիմնվելով կարելի է պնդել, որ հայերենում նախադասության կառուցվածքային կենտրոնը, հետևաբար և գլխավոր անդամը ստորոգյալն է, ենթական քերականորեն կախված է նրանից։

1. Իբրև առաջին և հիմնական ապացույց նշենք, որ առանց ստորոգյալի նախադասություն չի լինում, քանի որ նախադասությունն իբրև այդպիսին ձևավորող հիմնական հատկանիշը՝ ստորոգումն արտահայտվում է միայն դիմավոր բայով, այն է՝ ստորոգյալով։ Հետևաբար ստորոգյալը նախադասությունը ձևավորող հիմնական անդամն է, անհրաժեշտն ու պարտադիրը[14]։

2. Շատ դեպքերում դիմավոր բայ-ստորոգյալի մեջ արդեն պարունակվում է ենթակայի գաղափար. գրում եմ, գրելու եմ, գրեցինք, կգրենք, պիտի գրենք ստորոգյալների ենթական կարող է լինել մենք դերանունը (=ես, Արամը, Վարդանը...), իսկ գրում ես, գրելու ես, կգրես և այլ ստորոգյալների ենթական դու-ն է։ Հակառակը չենք կարող ասել. մենք ենթակայի համար ստորոգյալներ կարող են լինել առաջին դեմքի հոգնակի թվի բոլոր բայերը։ Սա նշանակում է, որ ենթական որոշ իմաստով բայի դեմքի արտահայտությունն է իբրև հավելում, և պատահական չէ, որ առաջին ու երկրորդ դեմքեր ունեցող ստորոգյալների հետ սովորաբար ենթակաները բառական արտահայտություն չեն ստանում[15] (նկատի չունենք ոճական կիրառությունները)։

3. Հայերենում, ինչպես և այլ լեզուներում գոյություն ունեն անենթակա

---

[9] Э. Бенвенист, Общая лингвистика, М., 1974, с. 138.

[10] Е. Курилович, Очерки по лингвистике, М., 1968, с. 53.

[11] Z. Tesniere, Elements de syntaxe structurale, Paris, 1969, p. 109.

[12] В. Юрченко, Сказуемое («Вопросы языкознания», 1977, № 6, с. 44).

[13] Խոսելով ենթակայի և ստորոգյալի կապակցության մասին, Է. Աթայանը գրում է. «ենթակայի մի շարք շարահյուսական առանձնահատկություններ... ստիպում են մտածել, որ այն բային ստորադասված տարր է, ինչպես խնդիրը» (Э. Атаян, Понятие элементарной синтаксической структуры, Ереван, 1964, с. 64).

[14] Խոսքը չի վերաբերում անդեմ նախադասություններին, որոնք ոչ սովորական կառույցներ են։

[15] Այս իմաստով Յու. Ապրեսյանը գրում է. «...Ստորոգյալը չի կարելի բաց թողնել առանց խախտելու նախադասության ճշտությունը, այն դեպքում, երբ շատ նախադասություններ կանոնական են առանց ենթակայի» (Ю. Апресян, Идеи и методы современной структурной лингвистики, М., 1966, с. 174).

նախադասություններ, որոնք ունեն մեկ գլխավոր անդամ՝ ստորոգյալ (Լուսացավ: Ցրտեց: Անձրևում է և այլն), մինչդեռ ենթակայով անստորոգյալ նախադասությունները բացառվում են։

4. Հայերենում կան մի շարք բայեր, որոնք ստորոգյալ դառնալիս պահանջում են հոգնակի ենթակա կամ եզակի ենթակա և հետ կապով արտահայտված ուղեկցող խնդիր, որը խորքային կառույցում, ի վերջո, ենթակա է, գործողության կատարման մասնակից. հավաքվել, ժողովվել, կուտակվել, պիզվել, խմբվել, շարվել, կիտվել, գրկախառնվել, ծեծկվել[16]. Ուսանողները հավաքվեցին: Մայրը գրկախառնվեց որդու հետ և այլն։

5. Ստորոգյալի կենտրոնական, գլխավոր անդամ լինելու ապացույց կարող է լինել նաև շարահյուսական—տրամաբանական այն երևույթը, որ նախադասության շեշտվող բառը (այդ թվում նաև ենթական) սովորաբար ընկնում է ստորոգյալի (օժանդակ բայի) կողքին. Ուսանողը դասերից հետո պարապում է ընթերցարանում: Ուսանողը դասերից հետո է պարապում ընթերցարանում: Դասերից հետո ուսանողն է պարապում ընթերցարանում: Դասերից հետո ուսանողը ընթերցարանում է պարապում: Շարադասության հետ կապված ավելացնենք նաև այն, որ մի շարք այնպիսի նախադասություններում, որոնցում ենթական և ուղիղ խնդիրը ձևաբանորեն տարբերակված չեն, ենթական որոշելը բավականին դժվար է։ Այս դեպքում սոսկ տրամաբանական դատողությունը չի օգնի, պիտի դիմենք նաև շարադասության օգնությանը։ Օրինակ՝ փայտը կոտրեց քարը: Որն է ենթական՝ քա՞րը, թե փայտը: Տրամաբանությունը չի օգնի, որովհետև, ճիշտ է, ավելի հաճախ քարն է փայտ կոտրում, բայց չի բացառվում, որ փայտն էլ քար կոտրի։ Նման դեպքերում ստորոգյալից առաջ ընկած բառը պետք է համարել ենթակա։ Իսկ ստորոգյալը, պայմանավորված նրա արտահայտությամբ, բոլոր տեսակի կառույցներում մնում է ստորոգյալ։

6. Նախադասությունների ըստ հնչերանգի դասդասումը (պատմողական, հարցական, հրամայական, բացականչական) սովորաբար համապատասխանում է ստորոգյալի քերականական ձևավորմանը. պատմողական նախադասություններում սովորական են սահմանական եղանակի բայաձևերով ստորոգյալները, հրամայականում՝ հրամայական, բացականչականում՝ ըղձական, իսկ հարցականում հրամայական չի լինում։

7. Վկայակոչենք նաև հայերենի պատմական և էրգատիվ լեզուների փաստերն իբրև լրացուցիչ ապացույցներ։ Գրաբարում կան առանձին դեպքեր, որոնցում ենթակայի հոլովի կախվածությունը ստորոգյալից ավելի ակնառու է։ Օրինակ՝ անցյալ դերբայով և օժանդակ բայի եզակի երրորդ դեմքով կազմվող բաղադրյալ ժամանակաձևերով արտահայտված ստորոգյալի հետ ենթական դրվում էր սեռական հոլովով, իսկ եղանակիչ բայերի հետ՝ տրական հոլովով։ Իսկ էրգատիվ լեզուներում ենթակայի հոլովը կառավարվում է ուղիղ խնդրով և ստորոգյալով, որոշ լեզուներում ենթակայի հոլովների թիվը, պայմանավորված ստորոգյալի իմաստով, կարող է հասնել վեցի[17]։

---

16 Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Ա, Երևան, 1965, էջ 635։

17 А. Мещанинов, Члены предложения и части речи, Л., 1978; И. Сизова, Что такое синтаксис?, М., 1966, с. 50; Г. Климов, Очерк общей теории эргативности, М., 1973, с. 78—79.

8. Դիմենք նաև փոխակերպման օգնությանը։ Ներգործաձև կառուցվածքի նախադասությունները կրավորաձևի փոխակերպելիս ստորոգյալը մնում է նույնը (ներգործական սեռի բայը դառնում է կրավորական), սակայն ենթական վերածվում է խնդրի, խնդիրը՝ ենթակայի. Քամին բացեց պատուհանը→Պատուհանը բացվեց քամուց: Իհարկե, խորքային իմաստով կրավորաձև կառուցվածքում քամուց բառը մնում է ենթակա իբրև գործողություն կատարող, սակայն այն ոչ ոք ենթակա չի համարում, որովհետև քերականության մեջ, ի վերջո, կարևորը մակերեսային կառուցվածքն է, քերականական ենթական։

9. Ընդունված է ասել, որ բարդ ստորադասական նախադասության մեջ երկրորդական նախադասությունը կատարում է գլխավորի այս կամ այն անդամի լրացման դեր։ Նշանակում է, երկրորդական նախադասությամբ կարող են արտահայտվել միայն երկրորդական անդամները՝ լրացումները, ինչպիսին են ստորոգելին (ստորոգելիական վերադիր), որոշիչը, խնդիրները, պարագաները։ Հայերենում կան նաև ենթակա երկրորդական նախադասություններ, հետևաբար ենթական նույնպիսի լրացում է, ինչպես մյուս անդամները։ Ստորոգյալ երկրորդական նախադասություն չի կարող լինել։

Կարծում ենք, այսքանը բավարար փաստարկներ են պնդելու, որ ենթական ու ստորոգյալը երբեք էլ նախադասության համազոր անդամներ չեն, քերականորեն գլխավորը, նախադասություն ստեղծողը ստորոգյալն է, ենթական քերականական կախման մեջ է ստորոգյալից։ Սակայն չպետք է կարծել, որ դրանով ենթական հավասարեցնում ենք բայական մյուս լրացումներին (խնդիրներ, պարագաներ), թեև կան այս տեսակետի կողմնակիցներ։ Լինելով քերականորեն ստորոգյալից կախյալ՝ ենթական խնդիրներից և պարագաներից տարբերվում է հարաբերության տեսակով, որը կոչվում է ստորոգումային։ Այնուհետև. եթե որևէ հոլովով արտահայտված խնդիրը կամ պարագան ունեն կապակցելիության սահմանափակություն, կարող են կապակցվել որոշակի խմբի բայերի, ապա ենթական ազատ է այդ սահմանափակումից, կարող է կապակցվել բոլոր դիմավոր բայերին՝ ուղղական հոլովով։ Սակայն, ի տարբերություն խնդիրների և պարագաների, ենթական կապակցվում է միայն դիմավոր բային և այս իմաստով ունենում որոշ սահմանափակում[18]։

Ասվածից երևում է, որ ենթական համարում ենք դիմավոր բայի քերականական խնդիր, որը ստորոգյալի պահանջով սովորաբար արտահայտվում է ուղղական հոլովով[19], և իբրև կապակցության եղանակ գործում է կառավարումը։ Բայց մյուս կողմից հայտնի է, որ ենթական և ստորոգյալը քերականորեն համաձայնում են դեմքով և թվով։ Սա նշանակում է, որ ստորոգումային հարաբերությունը կապակցության եղանակով երկբնույթ է՝ գործում են

---

18 Այս դեպքում նկատի ունենք մակերեսային կառուցվածքները, քանի որ խորքային կառուցվածքում ենթակա կարող են ունենալ ոչ դիմավոր բայերը, ոչ քերականական ստորոգյալները, եթե ավանդաբար ենթակա համարվում է գործողություն կատարողը. ուսանողի գնալը, աշակերտի պատմելը, իմ քայլելը և այլն։

19 Ժամանակակից հայերենում ենթական կարող է դրվել նաև բացառական հոլովով այն դեպքում, երբ չի վերցվում ամբողջ ծավալով. բղթերից թափվեցին հատակին, կատարվեցին Կոմիտասի ստեղծագործություններից (տե՛ս Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր, Երևան, 1962, էջ 16)։

կառավարումը և համաձայնությունը[20]։ Սա ըստ էության յուրահատուկ, ոչ սովորական կառավարում է, որովհետև ենթակայի հոլովը պայմանավորվում է ոչ թե բայ-ստորոգյալի բառական իմաստով, սեռով, կազմությամբ և այլն, այլ միայն բայի դիմավորությամբ, իբրև դիմավոր բայի լրացում։ Այդ է պատճառը, որ դիմավոր բայը անդեմ դարձնելիս ենթական վերանում է կամ, այլ ըմբռնմամբ, վերածվում կողմնակի ենթակայի՝ այլ հոլովով. ճայրը գնում է→ճոր գնալը, աշակերտը պատմում է→աշակերտի պատմելը, ես քայլում եմ→իմ քայլելը և այլն, իսկ մյուս բոլոր լրացումները մնում են՝ հավասարաչափ բնորոշ լինելով և՛ դիմավոր, և՛ անդեմ բայերին։

Ամփոփենք. հայերենում ենթական ու ստորոգյալը չենք դիտում որպես հավասարաղոր գլխավոր անդամներ։ Նրանք երբեք էլ հավասարաղոր ու հավասարաչափ գլխավոր լինել չեն կարող, քանի որ ունեն քերականական բոլորովին տարբեր արտահայտություն. ստորոգյալն արտահայտվում է միայն դիմավոր բայերով, ենթական՝ գոյականի ուղղական հոլովով (նաև գոյական դերանուններով և գոյականաբար առնված այլ բառերով)։ Բոլորովին տարբեր է նրանց դերն ու նշանակությունը նախադասության կառուցվածքում, էլ ինչպե՞ս կարող են նրանք հավասարաղոր գլխավոր լինել։

Ելնելով այս ըմբռնումից, փորձենք ընդհանուր ձևով խմբավորել նախադասություն կազմող բառերը՝ նկատի ունենալով միջուկային անդամի՝ ստորոգյալի և առհասարակ նախադասության մյուս բառերի հետ ունեցած կապն ու փոխհարաբերությունը, նրանց քերականական արտահայտությունը, դերն ու նշանակությունը։ Հասկանալի է, ստորոգյալը դիտում ենք առաջին կարգի կառուցվածքային անդամ։ Սրան անմիջականորեն կապված է ենթական որպես միայն դիմավոր բայի լրացում, երկրորդ կարգի անդամ, և այդ կապակցության հիմքի վրա ձևավորվում է նախադասության միջուկային կառույցը։ Երրորդ կարգի են մնացած ստորադաս բառերը, որոնք կարող են լինել կամ բայի լրացում (խնդիր, պարագա) կամ գոյականի (որոշիչն իր ենթատեսակներով)։ Ընդ որում, բայական երրորդ կարգի լրացումները կապվում են և՛ դիմավոր, և՛ անդեմ բայերին՝ ստորոգյալ և ոչ ստորոգյալ բայերին։ Նախադասության անդամների շարքում յուրահատուկ տեղ ունի ստորոգելին (ստորոգելիական վերադիր)։ Մի կողմից այն որոշ խմբի դիմավոր բայերի պահանջով դրված բայական լրացում է, մյուս կողմից ցույց է տալիս ենթակայի հատկանիշը՝ դառնալով միջուկային կառույցի բաղադրիչ։ Այս խմբավորումից դուրս մնացին երանգավորող բառերը, որոնք գոյություն ունեն միայն նախադասության կառուցվածքում (և ոչ բառակապակցության, ինչպես որոշիչը, խնդիրը, պարագան) և ավանդաբար նախադասության անդամ չեն համարվում, եղանակավորում են առանձին անդամներ կամ ամբողջ նախադասությունը, իսկ կոչական կոչվածները ցույց են տալիս, թե ում է ուղղված խոսքը, ում է դիմում խոսողը։

---

20 Ենթակայի ու ստորոգյալի կապը դիտելով որպես փոխադարձ ստորադասություն, Ե. Սկոբլիկովան գրում է. «Ստորոգյալի սեռի և թվի համաձայնությունը արտահայտում են նրա ստորադասությունը ենթակային, իսկ ենթակայի ուղղական հոլովը հիմնվում է ստորոգյալի նկատմամբ նրա ստորադասության վրա» (Е. Скобликова, Согласование и управление в русском яаыке, М., 1971, с. 76)։

К ВОПРОСУ О СОЧЕТАНИИ ПОДЛЕЖАЩЕГО И СКАЗУЕМОГО

ГЕНРИК АРУТЮНЯН

Резюме

Анализ ряда языковых фактов выявляет, что ядром, структурным центром предложения в армянском языке является спрягаемый глагол-сказуемое, а подлежащее со структурно-грамматической точки зрения подчинено сказуемому, так как: а) сказуемое выражает основной признак предложения — предикацию, б) имеются предложения без подлежащего, но нет предложений без сказуемого, в) подлежащее может быть выражено придаточным предложением, которое восполняет сказуемое главного предложения, г) при трансформации действительного залога (конструкции) в страдательный подлежащее меняется, сказуемое остается прежним, д) член предложения, несущий на себе логическое ударение, ставится рядом со сказуемым и т. д. Все это, однако, не означает, что подлежащее является обычным дополнением, так как оно подчиняется только спрягаемому глаголу.